

Բ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍԸ

Ստորև շառնակուքիւնը Բ. Յովհաննէսեանի մամուլի ասուլիսին, տրուած Պոլիս, Հինգշաբթի, Սեպտեմբեր 10-ին եւ որու առաջին մասը լոյս տեսաւ մեր նախորդ Թիւին մէջ (Սեպ. 12/13):

**

Բաֆֆի Յովհաննէսեանի այս խօսքերէն վերջ արդրողները սկսան հարցումներ ուղղել, առանց ճշդելու իրենց ինքնութիւնը:

ՀԱՐՅՈՒՄ .. Հայաստանի խորհրդարանին կողմէ կամ քաղաքական որեւէ պաշտօնական կազմակերպութեան կողմէ թուրքիայէ հողային պահանջ կա՞յ ներկայիս:

ՊՍՏՍՍԻՍԱՆ .. Հայաստան, մասնակցելով աշխարհի հասարակարդին, այսինքն անդամակցելով Միացեալ Ազգերու կազմակերպութեան եւ ՍԷ - ԷՍ - ՍԷ - Ը-ի կամ այլ նմանօրինակ կազմակերպութիւններու, ընդունած է արդէն բոլոր այդ կազմակերպութիւններուն սկզբունքները: Ասոնց մէջ կան, յարդել հողային ամբողջականութիւնը, ճանչնալ ինքնավարութեան իրաւունքը եւ հարցերը լուծել խաղաղ բանակցութիւններով:

Ինչպէս դիտէք, պատմական խնդիրներ ունինք: Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ մեծ ողբերգութիւններ պատահած են 1915-ին: Հայաստան որեւէ պահանջ չի հետապնդեր: Բոլոր պայմանները բնականոն դարձնել կը ջանանք առանց որեւէ քաղաքական պայման առաջ քշելու: Բայց եթէ թուրքիա, օրինակի համար, կ'ուզէ անպայման նայիլ անցեալի դէպքերուն, մենք ալ պատրաստ ենք վար առնելու բոլոր թղթածրարները, Հայաստանի ու թուրքիոյ յարաբերութիւններու տեսակէտէ: Բայց եւ այնպէս մենք առանց նախապայմանի կ'ուզենք բնականոն դարձնել մեր յարաբերութիւնները, նայելով դէպի յառաջ, երկկողմանի ամուր յարաբերութիւններ հաստատելու համար:

ՀԱՐՅՈՒՄ .. Պ. Յովհաննէսեան, լաւատե՞ս էք Լեռնային Ղարաբաղի խնդրով կազմակերպուած Հոռմի խորհրդածոզովին մասին եւ ի՞նչ են արգելքները արդիւնքի մը յանգելու համար այդ խորհրդածոզովի ընթացքին:

Պ .. Ուրեմն, դժբախտարար Լեռնային Ղարաբաղի հարցը շատ քաղաքականացած հարցի մը վերածուած է: Իրականութեան մէջ Հոռմի խորհրդածոզովի, յետոյ Մինսկի մէջ յաջողելու համար որեւէ արդելք չկայ: Դժբախտարար ներկայիս, որ Ազրբեջան ղինուորական յաջողութիւններ արձանագրած է, կը մերժէ հրադադարը: Մարիօ Ռաֆայէլի, Հոռմի խորհրդածոզովի նախագահը, կոչ ըրաւ, որպէսզի կողմերը դադրեցնեն ղինուորական գործողութիւնները: Հայաստան այո՛ պատասխանեց, Ղարաբաղը այո՛ ըսաւ, բայց դեռ ճայն չկայ Ազրբեջանէն: Կը յուսանք, որ անոնք ալ պիտի հասկնան որ այս պատերազմը յաղթական չունի: Հարցը լուծելու միակ ճամբան բանակցութիւններու նատիլ է, բայց դժբախտարար Ազրբեջան միշտ մերժեց բանակցիլ, որեւէ երկխօսութիւն ստեղծել Ղարաբաղի հետ, նաեւ միշտ մերժեց, որ միջազգային մարմիններ կամ ՄԱԿ խաղաղարար ուժեր ղրկէ Ղարաբաղ: Դժբախտարար Մինսկի յաջողութեան եւ մեր միջեւ կը գտնուի

մէկ արդեւէք, այդ ալ Ազրբեջանի կողմէ արտասանելի «այո» բառն է: Կր յուսանք որ անոնք պիտի արտասանեն այս «այո» ու այն ատեն պիտի յառաջդիմենք: Բայց առանց ատոր, եթէ Ազրբեջան շարունակէ զինուորական գործողութիւնները Լեռնային Ղարաբաղի մէջ, եթէ մերժէ երկխօսութիւն հաստատել Ղարաբաղի առաջնորդներուն հետ, եւ մերժէ նաեւ խաղաղարար ուժերուն ժամանումը, այն ատեն չափազանց կը դժուարանայ այս խնդրին լուծումը:

Հ. Ազրբեջան հրադադարի համար կը պահանջէ, որ հայկական զինուորական ուժերը դուրս գան Ղարաբաղէն: Դուք պատրաստ էք ընդառաջելու այսպիսի պայմանի մը:

Պ. Դաւիթբորնիոյ համալսարանի իրաւաբանական դասախօսութեանց մէջ այդպիսի հարցումները կը կոչեն «առաջնորդող հարցում»: Լեռնային Ղարաբաղի մասին մեր տեսակէտը հետեւեալն է. կրնայ պատահիլ որ Լեռնային Ղարաբաղի մէջ հայազգայնապաշտ կամաւորներ կռուին, նոյնպէս ինչպէս որ հաւանական է նաեւ որ թուրք ազգայնապաշտ կամաւորներ Ազրբեջանցիներու կողքին մասնակցին կը ունենան: Բայց եւ այնպէս մենք պաշտնական չենք նկատեր Հայերու ու թուրքերու այս ներկայութիւնը Ղարաբաղի հակամարտութեան մէջ: Մեզմէ շատեր տակաւին լրիւ չեն հասկնար այս հակամարտութեան բուն բնոյթը: Ասիկա ո՛չ հողային, ո՛չ ալ կրօնական հարց մըն է Հայերու ու Ազրբեջանցիներու միջեւ: Ասիկա ուղղակի եօթանասուն տարի առաջ Ստալինի կողմէ կիրարկուած ազգայնական քաղաքականութեան արդիւնքն է: Ստեղծուած է խառնակ կացութիւն մը, որով մէկ երկրին հողամասերը դրուած են ուրիշ երկրներու հողամասերուն մէջ, անոնց տրուած է ինքնավարութեան իրաւունքներ, եւ յետոյ անոնց ըսուած է «Ասրեցէ՛ք»: Բացայայտ է, որ նպատակը ուրիշ բան չէր, եթէ ոչ ազգերը իրարու դէմ թշնամացնել եւ արդեւէք ըլլալ, որ անոնք զբաղին իրենց բուն թշնամիով, որ այդ շրջանի սամոզատիրական իրաւակարգն էր: Եւ յաջողեցաւ: Երբ Խորհ. Միութիւնը փուլ եկաւ, ծագում առաւ այն հարցումը, թէ ի՞նչ պիտի պատահի հիմա: Ի՞նչ պիտի ըլլայ Լեռնային Ղարաբաղը, որ հայկական հողամաս մըն էր իր հայ բնակչութեամբ եւ հայկական պատմութեամբ, իր սահմաններով, որ Խորհ. Միութեան շրջանին իսկ ունէր իր Խորհրդարանը, իր ոստիկանութիւնը, իր կառավարութիւնը: Աս հողամասը պիտի շարունակէ՞ր ընդունիլ Ստալինի կողմէ կատարուած իրողութիւնը, թէ ոչ պիտի ստեղծէր ժամանակակից բարբերու յարմար նոր լուծում մը. ահաւասիկ դժուար հարց մը: Մեր կարծիքը այն է, որ այս խնդրին լուծումը կը կայանայ ինքնորոշման իրաւունքի մէջ: Եւ Հայաստան միշտ ըսաւ, որ ինչ որ ալ ըլլայ բանակցութիւններուն արդիւնքը Ղարաբաղի ու Ազրբեջանի միջեւ, Հայաստան պիտի օրհնէ այդ համաձայնութիւնը եւ պիտի ընդունի նոյնութեամբ: Ազրբեջան տակաւին Ղարաբաղի ղեկավարներուն հետ երկխօսութեան չէ ձեռնարկած, նկատի առէք ուրիշ օրինակներ: Օրինակի համար դուք կրնաք տարբեր կարծիքներ ունենալ Կիպրոսի ու Հիւսիսային Կիպրոսի կամ Արիսաղիոյ մասին: Բայց միշտ երկխօսութեան մէջ էք խնդրոյ առարկայ կողմին հետ, որքան ալ դժուար ըլլայ այդ երկխօսութիւնը: Բայց այս խնդրին մէջ, Աստուած գիտէ ինչու, Ազրբեջան կը մերժէ երկխօսութեան մէջ մտնել Ղարաբաղի հետ եւ ասիկա մեր դիմաց ցըցւած ամենամեծ արդեւէքն է: Եթէ Ազրբեջան շարունակէ զինուորական գործողութիւնները --ինչպէս դիտէք վերջին երկու ամսուան մէջ ան զբաւեց Հիւսիսային Ղարաբաղի 25 առ հարիւրը, պատճառ դառնալով 45.000 Հայերու Հայաստան դադթելուն-- եւ միաժամանակ եթէ մերժէ երկխօսութիւն հաստատել, այդ պարագային պէտք է որ ամբողջ աշխարհ միջամտէ, ինչպէս կ'ընէ ուրիշ խոսովեալ վայրերու մէջ: Հայաստան մեծ ցաւ կը զգայ Պոսնիա - Հերցեգովինի մէջ պատահած ազգամիջեան խտրականութեան համար, բայց եթէ դուք իրրեւ լրագրող Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտ երթաք, ձեր աչքերով պիտի տեսնէք որ հոն ալ ազգամիջեան խտրականութիւն կայ, եւ Ստեփանակերտը ճիշդ նմանն է Սարայեւոյի:

յարձակիք բարձր կառավարութեան վրայ: Ձեռք գլխարկ, մեզի այդպէս բաժնէն, երբէ ստիկա իրակամութիւն է. ի՞նչ է պատմաբար:

Պ. Ես երբեք չեմ յարձակած թուրք կառավարութեան վրայ եւ չեմ հասկընար թէ ի՞նչպէս կրնամ յարձակած ըլլալ: Մէկ ժամ վերջ դուք պիտի ունենաք պատճէնը այն խօսակցութեան, զոր այս առաւօտ կատարած եմ:

Հ. Թերեւս յարձակում չէ, այլեւ քննադատութիւն: Թուրքիան քննադատած էք միշտ:

Պ. Բայց ասիկա ժողովրդավարութիւն է: Քննադատութեան իրաւունքը, ինչպէս թուրքերոյ մէջ, նոյնպէս ամէնուրեք ի գորու է: Մենք մեր այսօրուան խօսակցութեան մէջ ծանրացանք քանի մը կէտերու վրայ: Կանգ առինք Հայաստանի երկար պատմութեան վրայ, շեշտեցինք թէ նուիրուած ենք ժողովրդավարութեան, միաժամանակ երկու հարցումներ ուղղեցինք, որոնք կապուած են Հայաստանի Եւրոպական Խորհուրդի անդամակցութեան առջեւ դրուած պաշտօնական ու անպաշտօն արդեւէքներու, ինչպէս թուրքերոյ հետ Հայաստանի յարաբերութիւնները ու Ղարաբաղի հարցը: Ես յայտնեցի մեր տեսակէտը թուրքեւհայ յարաբերութիւններու մասին եւ պիտի տեսնէք որ շատ դրական տեսակէտ մըն է: Նաեւ մեր շինիչ դիրքաւորումը՝ Լեռնային Ղարաբաղի մէջ, հակառակ անոր որ թուրքիա շեղած է սկզբնական շրջանի իր անկողմնակալ կեցուածքէն: Թուրքերոյ այս կողմնակալութիւնը կարելոր արդեւէք մըն է հարցին լուծման համար, պատճառները մեզի հասկնալի են, բայց կը սիրենք յուսալ, որ թուրքիա շուտով կը վերադառնայ իր սկզբնական անկողմնակալութեան: Եւ ինչ որ ամէնէն կարելորն է, կը սիրենք յուսալ որ հայեթուրք յարաբերութիւնները կը վերադառնան բազմաթիւ տասնամեակներ առաջուան շրջաններուն, երբ Հայեր ու թուրքեր միասնաբար Սուլթանին դէմ 1908-ին կը հիմնէին ժողովրդավար կարգավիճակի մը հիմերը: Հայեթուրք յարաբերութիւնները պէտք չէ գործածուին իրրեւ պատրուակ, որպէսզի մերժուի Հայաստանի մուտքը՝ Եւրոպական Խորհուրդ: Թուրքիա թէ՛ իրեն ու Հայաստանին համար, եւ թէ Եւրոպայի համար լաւ գործ մը ըրած կ'ըլլայ քաջալերելով Հայաստանի մասնակցութիւնը Եւրոպական Խորհուրդ: Այս էր այս առաւօտ մեր ըսածները:

Հ. Պարոն նախարար, քիչ առաջ Ազրբեջանի Արտաքին նախարարը մեզի ըսաւ, որ Ալմա - Աթայի հրադադարի համաձայնութիւնը կը յարգուի: Բայց դուք քիչ առաջ հակառակը պնդեցիք: Արդեօք ըսել ուզեցիք որ Ալմա - Աթայի հրադադարը որեւէ կերպով խախտած է:

Պ. Կը խորհիմ, որ կողմերէն մէկը չի յարգեր Ալմա - Աթայի համաձայնութեան պայմանները: Ինչպէս դիտէք, Ռաֆայէլի կողմէ հրադադարի կոչ կատարուած էր, Հայաստան անմիջապէս դրական պատասխանած էր, նոյնը ըրած էր Ղարաբաղ: Բայց Ազրբեջան չէր պատասխանած: Յետոյ Նազարբայեւի հրաւերով գացինք Ալմա - Աթա՝ հոն հրադադարի մը մասին համաձայնութիւն գոյացաւ: Սեպտեմբեր 1-էն առդին Հայաստանի ու Ազրբեջանի սահմանին վրայ կարգ մը տեղեր հրադադարը կը գործադրուի, բայց կարգ մը տեղեր՝ ո՛չ: Իսկ Ղարաբաղի մէջ բացարձակապէս չի յարգուի: Եւ տարօրինակ է որ Ազրբեջան, Ալմա - Աթայի համաձայնութիւնը ընդունելով հանդերձ, տակաւին «այո՛» չէ ըսած Ռաֆայէլի կոչին: Պատճառը պարզ է. եթէ Ռաֆայէլին «այո՛» ըսէ, պիտի ստիպուի Ղարաբաղի մէջ ալ հրադադար ընդունելու եւ պիտի չկարենայ իր զինուորական գործողութեամբ Ղարաբաղը զբաւել շարունակել: Ղասըմով ինծի ըսաւ որ Ղարաբաղի մէջ 25.000 հայ զինուորներ կը կռուին: Այս պնդումը այնքան ծիծաղելի է, որքան պնդել թէ թուրք զինուորներ կը կռուին Ղարաբաղի մէջ: Ես ձեզ կը հրաւիրեմ Ղարաբաղ: Եթէ հոն երթաք պիտի տեսնէք թէ բնակչութեան 90 տոկոսը խաղաղ զիւղացիներ են, որոնք միայն իրենց արտերն ու տուները կը պաշտպանեն:

(Մնացեալը յաջորդով)

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville — 75010 Paris
Commission Paritaire : No 55935
SIRET : 51027317 A R.C. Paris

Հ. Մենք լսած ենք որ դուք միշտ կը

Այրի
Տէր
Տէր
(Միայն
Տէր
եւ ըն
խոր ցո
մուսնո
մահը,
Սեպտե
Յուր
երեքը
ին Շա
ղեցին
զերեկ
Ոչ
Փո
պաս
ՄԱԲ
Կա
Ղի
ընկե
եւ հ
կու
մը
եկե
անդ
բու
կի